Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ՄԱՅԻՍԻ 16-Ի N 650-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	6
171	Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրում	171.1 Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակում	Մշակվել և ՀՀ ԿԳ նախարարի 2019 թվականի ապրիլի 23-ի N 390-Ա/2, հրամանով հաստատվել են «Գիտական կամ գիտատեխնիկական պետական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման, տարակարգման և բազային ֆինանսավորման հիմնական սկզբունքները և չափանիշները»: Ստեղծվել և ներդրման փուլում է գիտական և գիտատեխնիկական գործունեության ընթացքում ստացված գիտական արդյունքների ներկայացման միասնական համակարգը: ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահի 2019 թվականի հունիսի 25-ի N 22-Ա/Ք հրամանով գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ և հաստատվել է դրա կազմը: Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ մեթոդաբանության մշակումից և տվյալների հավաքագրումից հետո ՀՀ գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատումն	----------	----------

			իրականացնելու համար՝ ՀՀ ԿԳ նախարարի 2019 թվականի ապրիլի 23-ի N 390-Ա/2 հրամանով հաստատված սկզբունքներին և չափանիշներին համապատասխան:		
		171.5 «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի նոյեմբերի 9-ի N 01/9.2.1/25946-19 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 01/08.4/51253-2019 հանձնարարականով վերադարձվել է լրամշակման կից ներկայացված եզրակացության հիման վրա: Լրամշակումից հետո ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 01/9.2.1/29403-19 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի N 02/11.8/56206-2019 հանձնարարականով վերադարձվել է կից համապատասխան եզրակացությամբ: Լրամշակումից հետո կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:	----------	----------
172	Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում	172.1 «Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի նոյեմբերի 11-ի N 01/9.2.1/26048-19 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի N 08.4/52346-2019 հանձնարարականով վերադարձվել է: Կրկին անգամ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի դեկտեմբերիր 13-ի N 01/9.2.1/29527-19 գրությամբ:	----------	----------